ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 12-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՍԵՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՐԵՄՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արսեն Հայրապետի Երեմյանի դիմումը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետություն կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի, <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> 2002 թվականի դեկտեմբերի 25-ի օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ կադաստրային քարտեզագրման արդյունքում Արսեն Հայրապետի Երեմյանի կողմից փաստացի օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չէ <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական, պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ճանաչել Արսեն Հայրապետի Երեմյանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի, կադաստրային 07-033-0036-0009 ծածկագրով փաստացի օգտագործվող 0.169772 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ, որը փաստացի օգտագործվել է նրա կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2. Հողամասի սահմանները որոշվում են <<ԳԵՈԼԵՆԴ>> ՍՊԸ-ի կողմից չափագրված և Լեռնանիստ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

3. Լեռնանիստ համայնքի բնակիչ Արսեն Հայրապետի Երեմյանին պատկանող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 5-րդ փողոց թիվ 18:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը գրանցել Լեռնանիստ համայնքի բնակիչ Արսեն Հայրապետի Երեմյանի սեփականության իրավունքն ամրագրված հողամասի նկատմամբ ու տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

20 19թ. փետրվարի 6
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 13- Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ՝ ԴԱՎԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԶԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԳՈՀԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՆԵԼԼԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՔՐԻՍՏԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԵՎ ԼԻԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 22 -րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-իթիվ 2387-ն որոշմամբ հաստատված կարգի 48 կետով , հիմք ընդունելով Դավիթ Վարդանյանի 2019 թվականի փետրվարի 5-ի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի բնակչներ՝ Դավիթ Վարդանյանին, Զարիկ Վարդանյանին, Գոհարիկ Վարդանյանին, Նելլի Վարդանյանին, Քրիստինե Վարդանյանին և Լիաննա Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփ. վկայական թիվ 2583007 , կադաստրային ծածկագիր – 07-033-089-003) բնակելի տանը տրամադրել հասցե՝
Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք **1-ին փողոց 6 փակուղի տուն 3** :

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

20 19թ. փետրվարի 6
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 14- Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԴԱՎԻԹ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻՆ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22 –րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-ն որոշմամբ հաստատված կարգի 48 կետով , հիմք ընդունելով Դավիթ Հարությունյանի 2019 թվականի փետրվարի 6-ի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Քաղաքացի Դավիթ Վաղարշակի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող , Լեռնանիստ համայնքում գտնվող (սեփ. վկայական թիվ 2296022 , կադաստրային ծածկագիր – 07-033-0201-0002) անասնաշենքին տրամադրել հասցե՝
Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 14 փողոց 17 շենք :

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2019 թ փետրվարի 7
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 15- Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ՝ ԱԼՖԻԴԱՆ ԼՅՈՒԴՎԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ /ՀԱՆԳՈՒՑՅԱԼ/ ԳԱՅԱՆԵ ՇՄԱՎՈՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՕԼՅԱ ԱՂԱՍՈՒ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՍԵՆ ԱԼՖՐԻԴԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22 –րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-ն որոշմամբ հաստատված կարգի 48 կետով , հիմք ընդունելով Ալֆիդան Մկրտչյանի 2019 թվականի փետրվարի 20-ի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի բնակչներ՝ Ալֆիդան Լյուդվիկի Մկրտչյանին, /հանգուցյալ/ Գայանե Շմավոնի Մկրտչյանին, Օլյա Աղասու Մկրտչյանին և Արսեն Ալֆրիդի Մկրտչյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (սեփ. վկայական թիվ 0161293 , կադաստրային ծածկագիր – 07-033-075-006) բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 1-ին փողոց 8-րդ փակուղի տուն 9 :

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

20 19 թ. 21 փետրվարի
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 16-Ա

ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով, Հողային Օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 49 կետով և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետարանի 2019 թվականի փետրվարի 19-ի N 01 (12) 01197-2019 գրությունը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով, ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝

հանձնաժողովի նախագահ - Լեռնանիստ համայնքի ղեկավար՝ Արտյոմ Հայրապետյան
հանձնաժողովի քարտուղար- Լեռնանիստի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հովհաննես Մարգարյան
հանձնաժողովի անդամ - Լեռնանիստ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Արտակ Ադամյան
հանձնաժողովի անդամ - Լեռնանիստ համայնքի ավագանու անդամ՝ Գենադի Ավագյան
հանձնաժողովի անդամ - Լեռնանիստ համայնքի ավագանու անդամ՝ Ռոման Մանուկյան
հանձնաժողովի անդամ- Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ՝ Հայկ Հակոբյան

2. Ուժը կորցրած ճանաչել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ղեկավարի 2017 թվականի ապրիլի 13-ի << Լեռնանիստ համայնքի հողամասերի վարձակալության մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին>> N 36-Ա որոշումը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

2019 թ. փետրվարի 22
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՄԱՐՏԻ 2019թվականի N 17-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2019 թվականի փետրվարի 22-ի N 31-Ա որոշման՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի տարածքում 2019 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. առաջարկություններ՝ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսված միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Մինչև 2019 թվականի մարտի 19-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել միջոցառումների պլանը և տեղեկացնել, որ համայնքում հակահեղեղային կառույցներ չունենք:
4. Սույն որոշման կատարման հսկողությանը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Արտակ Ադամյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

20 19 թ. մարտի 1
գ.Լեռնանիստ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ղեկավարի
2019 թվականի մարտի 1-ի N 17-Ա որոշման

ՊԼԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ,ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	Միջոցառումների անվանումը	Կատարող	Կատարման ժամկետը
1	2	3	4
	1. Կանխարգելիչ միջոցառումներ		
1.	Ուսումնասիրել սելավատարերի հուների վիճակը և արդյունքները ներկայացնել Կոտայքի մարզային փրկարարական վարչություն:	Համայնքի ղեկավարի տեղակալ	Մինչև 19.03.2019թ
2.	Մաքրել համայնքի տարածքով հոսող սելավատարերի հուները, ձնհալների և հորդառատ անձրևներ ժամանակ առաջացած սելավներից զերծ մնալու համար	Համայնքի ղեկավարի տեղակալ	Մինչև 19.03.2019թ
3.	Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ստեղծված իրավիճակների դեպքում սելավավտանգ գոտիներում աշխատանքները կարգավորելու համար	Համայնքի ղեկավարի տեղակալ	Մշտապես
	2. Հիմնական միջոցառումներ		
4.	Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը է իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին:	Համայնքի ղեկավարի տեղակալ	Մշտապես

5.	Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու համար:	Համայնքի ղեկավարի տեղակալ	Անհրաժեշտության դեպքում
6.	Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժանամակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը:	Համայնքի ղեկավարի տեղակալ	Անհրաժեշտության դեպքում
7.	Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարականգնողական աշխատանքներ:	Համայնքի ղեկավարի տեղակալ	Անհրաժեշտության դեպքում
8.	Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին /իրենց համաձայնությամբ /սելավների և հեղեղումների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների	Համայնքի ղեկավարի տեղակալ	Անհրաժեշտության դեպքում

Լեռնանիստ համայնքի ղեկավար՝ Ա.Հայրապետյան

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի
2019 թվականի մարտի 1-ի N 17 -Ա որոշման

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցառումների վերաբերյալ

1. Վտանգավոր /աղետի/ անվանումը /ները/ - Սելավ - Հեղեղում - Սողանք - Քարաթափում - և այլն	- սելավներ - հեղեղում
2. Վտանգավոր տեղամասի Գտնվելու վայրը/ երը/	1-ին թաղամաս 3-րդ թաղամաս 9-րդ թաղամաս
3. Առաջացման հնարավոր պատճառները	Հորդառատ անձրևների և արագ ձնհալի
4. Վտանգավոր տեղամասերի նկարագրությունը: Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը	Գտնվում են սելավատարների անմիջապես հարևանությամբ: Շենքերի և շինությունների թիվը կազմում են 38, իսկ բնակչության թիվը՝ 160 մարդ
5. Կանխարգելիք միջոցառումների առաջարկությունների իրականացնելու համար	Սելավատարների մաքրման աշխատանքներ և սելավատարների պատնեշների կառուցում
6.Համայնքի բյուջեում կամ այլ ծրագրերով 2019թ-ին պլանավորված, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար ծախսերի չափը ըստ միջոցառումների տեսակների	2019 թվականին Արտակարգ իրավիճաների կանխարգելիչ միջոցառումների կազմակերպման համար համայնքի բյուջեով նախատեսված է ընդամենը 100.000 ՀՀ դրամ:

Լեռնանիստ համայնքի ղեկավար՝ Ա.Հայրապետյան